«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27/02

ք. Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ 23.08.2018թ. ժամը 15:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի՝ սնանկության վարույթում գույքերի աճուրդների կազմակերպման և անցկացման հայտարարությունների վերաբերյալ 13.08.2018թ-ի գրության հիմքով, սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի 23-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը, Ռուբեն Խալաթյանը, Հենրիկ Մարտիկյանը պատշաճ ծանուցված էին հանձնաժողովի նիստի տեղի և ժամի մասին,սակայն բացակայում էին նիստից:
Սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.2-րդ կետը, որի համաձայն «ՍԳԿԿ»ԻԿԿ Կարգապահական հանձաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամներից առնվազն երեքը: 23.05.2018թ-ի ժամը 15:00-ի նիստին ներկա էին Հանձնաժողովի երկու անդամ, առաջարկվեց նիստը հետաձգել՝ քվորումը չապահովվելու հիմքով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 2
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

1.«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի ՝ սնանկության վարույթում գույքերի աճուրդների կազմակերպման և անցկացման հայտարարությունների վերաբերյալ 13.08.2018թ-ի գրության հիմքով, սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների փաստական հանգամանքների քննության համար 2018թ-ի Օգոստոսի 23-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը

հետաձգել և նշանակել 14.09.2018թ-ին ժամը 15.00-ին, ք.Երևան, Արշակունյաց 5.417 սենյակ, հասցեում:
2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովվել կողմերին պատշաճ ծանուցում՝ հանձնաժողովի նիստի վայրի և ժամի վերաբերյալ:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան